ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N **ԱԿ**-09.06.01.27/19

քաղ. Երևան «14»«փետրվար» 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը,ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հույսի կամուրջ» ՀԿ-ն, ի դեմս կազմակերպության նախագահՍ. Թադևոսյանի(այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 1193 ծրագրի 11001 «Մանկավարժահոգեբանական ծառայությունների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման օժանդակող միջոցառումներ» միջոցառումը (այսուհետ՝ ծրագիր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 111206880 (Հարյուր տասնմեկ միլիոն երկու հարյուր վեց հազար ութ հարյուր ութսուն) գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները ևպարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին

փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:Սույն պայմանագրի դրույթները գործում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած փոխհարաբերությունների վրա:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հույսի կամուրջ» ՀԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	ք. Երևան, Կորյունի 19 ա, շին 7
ՀՀ ՖՆգործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011011732	Հ/Հ 1570026212980600
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 01212788
Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող	Նախագահ
_____ Վ. Գասպարյան	_____ Ս. Թադևոսյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1
«14»«**փետրվար**» 2022**թ**.
կնքված ԱԿ-09.06.01.27/19 **պայմանագրի**

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման							
Անվանումը	**Նկարագիրը**	**Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները**	**Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**		**Միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը**	**Պահանջվող գումարը (դրամ)**
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում:	Հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն ու մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումն իրականավցվում է ըստ նրանց ԱՈՒՊ-ով նախատեսված աջակցող ծառայությունների տեսակի, ժամանակահատվածի, տևողության և ծավալների ու ծառայությունների տրամադրման գրաֆիկի:	1.1 Կրթության առանձնահատուկ պայմանների գնահատում:	1.1.1 ԿԱՊԿ-ը գնահատված սովորողներ:	21	30.12.2022թ.	**Ամսական հաշվետվություն** Յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա մինչև ամսի 5-ը նկարագրական հաշվետվության ներկայացում ՀՄԿ **Եռամսյակային հաշվետվություն** Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա մինչև ամսի 5-ը ֆինանսական ու նկարագրական հաշվետվությունների ներկայացում ԿԳՄՍ: Միայն նկարագրական հաշվետվության ներկայացում ՀՄԿ:	111,206,880 **դրամ**
		1.2 Կրթության առանձնահատուկ պայմանների վերագնահատում:	1.2.1 ԿԱՊԿ-ը վերագնահատված սովորողներ:	86			
		1.3 ԱՈՒՊ-ով նախատեսված արդյունքների ամփոփում և հաշվետվության կազմում:	1.3.1 Կազմված հաշվետվությունների թիվը:	454			

			1.4 ՄՀԱ ծառայությունների տրամադրում:	1.4.1 ՄՀԱ ծառայություններ ստացած սովորողներ:	454		**Կիսամյակային հաշվետվություն** Յուրաքանչյուր կիսմյակին հաջորդող ամսվա մինչև ամսի 5-ը ֆինանսական ու նկարագրական հաշվետվությունների ներկայացում ԿԳՄՍ: Միայն նկարագրական հաշվետվության ներկայացում ՀՄԿ: **Տարեկանհաշվետվություն** Մինչև.թ. դեկտեմբերի 25-ը ֆինանսական ու նկարագրական հաշվետվությունների ներկայացում ԿԳՄՍ: Միայն նկարագրական հաշվետվության ներկայացում ՀՄԿ:
2	Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում:	Զարգացման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է երեխայի տարիքին և զարգացման առանձնահատկություններին համապատասխան՝ հիմք ընդունելով 2021 թվականի մայիսի 15-ին ՀՀ կառավարության N 744-Նորոշմամբ հաստատված «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով» սահմանված կարողունակությունների մակարդակը և զարգացման ոլորտները և համապատասխանաբար տրամադրվում են ՄՀԱ ծառայությունները:	2.1 Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:	2.1.1 ԶԿԱՊ-ը գնահատված Ն/Դ տարիքի երեխաներ:	20	30.12.2022թ.	
			2.2 Ն/Դ տարիքի երեխաներին ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրում:	2.2 ՄՀ աջակցության ծառայություններ ստացած Ն/Դ տարիքի երեխաներ:	74		
3	Ուսումնական հաստատություններ ի մանկավարժների համար վերապատրաստման դասընթացների և սեմինարների անցկացում:	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրականացման գործընթացի բարելավման նպատակով ուսումնական	3.1 80 ՀՈՒՀ-երի մանկավարժների կարողությունների զարգացման դասընթացների կազմակերպում:	3.1.1 80 ՀՈՒՀ-երում իրականացրած դասընթացների ընդհանուր թիվը	400 (յուրաքանչյուրում 5)	30.12.2022թ	
				3.1.2 Դասընթացներին մասնակցած 80 ՀՈՒՀ-երի ուսուցիչների ընդհանուր թիվը	1400		
			3.2 Թվով 8 նեղ մասնագիտական	3.2.1 ՀՈՒՀ-երում ՄՀԱ խմբերի համար	8		

	մանկավարժների կարողություններին հզորացում համապատասխան թեմաների շուրջ:	պարապմունքներ մարզի ՀՈՒՀ-երի ՄՀԱ ծառայություններ տրամադրող աշխատակիցների համար:	դասընթացների թիվը:				
			3.2.2 Դասընթացներին մասնակցած 80 ՀՈՒՀ-երի ՄՀԱ խմբի մանկավարժների թիվը:	284			
		3.3 Թվով 5 դասընթաց և սեմինար պարապմունք կկազմակերպվի նաև մարզի 70 ՆՈՒՀ-երի մանկավարժների համար:	3.3.1 70 ՆՈՒՀ-երի համար կազմակերպած դասընթացների ընդհանուր թիվը	5			
			3.3.2 Դասընթացներին մասնակցած 70 ՆՈՒՀ-երի դաստիարակների թիվը:	200			
Խորհրդատվություններ երեխայի կրթության կազմակերպման և սոցիալական ներառման հարցերի շուրջ:	Խորհրդատվությունները կազմակերպվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների և ուսումնական հաստատությունների (այդ թվում նախադպրոցական) մանկավարժական աշխատողների համար:	4.1 Խորհրդատվությունների տրամադրում 80 դպրոցների առարկայական ուսուցիչների և ՄՀԱ խմբերի համար:	4.1.1 80 ՀՈՒՀ-երում իրականացրած խորհրդատվությունների թիվը:	570	30.12.2022թ		
			4.1.2 Խորհրդատվությունների ն մասնակցած ՀՈՒՀ-երի ուսուցիչների թիվը:	1400			
			4.1.3. Խորհրդատվությունների նմասնակցած ՄՀԱ մանկավարժներիթիվը:	284			
		4.2 Խորհրդատվությունների տրամադրում 70 ՆՈՒՀ-երի մանկավարժական աշխատողների համար:	4.2.1 70 ՆՈՒՀ-երում իրականացրած խորհրդատվությունների թիվը:	50			
			4.2.2 Խորհրդատվությունների ն մասնակցած ՆՈՒՀ-երի դաստիարակների թիվը:	200			
		4.3 Խորհրդատվությունների տրամադրում ծնողներին:	4.3.1 Ծնողների համար կազմակերպած խորհրդատվությունների թիվը:	24 (20 խորհրդատվություն և 4			

			4.3.2 Խորհրդատվությունների ն մասնակցած ծնողների թիվը:	500	
Աջակցության տրամադրում ԱՈՒՊ-ների մշակման և իրականացման գործընթացում:	Աջակցությունը կտրամադրվի հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանների մշակման և իրականացման գործում:	5.1 Աջակցություն ԱՈՒՊ-ի մշակմանն ու իրականացմանը:	5.1.1 Մշակված և իրականացված ԱՈՒՊ-ներիթիվը:	454	30.12.2022թ
		5.2 Աջկացություն ԱՈՒՊ-ների կիսամյակային և տարեկան գնահատմանը:	5.2.1 2-րդ կիսամյակի ավարտին գնահատված ԱՈՒՊ-ների թիվը:	454	
			5.2.2 2-րդ կիսամյակի ավարտին ԱՈՒՊ-ով սահմանված տարեկան արդյունքներին հասած սովորողների թիվը:	454	
			5.2.3 1-ին կիսամյակի ավարտին ԱՈՒՊ-ով սահմանված կիսամյակային արդյունքներին հասած սովորողների թիվը:	400 (առնվ ազն)	
		5.3 Աջակցություն ԱՈՒՊ-ների վերանայմանը:	5.3.1 1-ին կիսամյակի ավարտին վերանյված ԱՈՒՊ-ների թիվը (այն սովորողների, ովքեր չեն հասել ԱՈՒՊ-ով սահմանված կիսամյակային կրթության արդյունքներին և այն սովորողների, ում համար սահմանված արդյունքի նվազագույն շեմը կարիք կա բարձրացնելու):	100 (54 + 46)	
ովորողների ութության ռաջընթացի ւտարկում, ռաջադիմությանը	Երաշխավորությունների մշակվում և իրականացվում է դիտարկումների ընթացքում	6.1. Սովորողի դիտարկում: Առաջադիմությանը նպաստող կամ խոչընդոտող	6.1.1 Մշակված երաշխավարությունների թիվը:	110	30.12.2022թ

յործոնների ւացահայտում և ւրաշխավորությունն ւրի մշակում՝ մանկավարժների և ծնողների համար:	խոչընդոտող գործոնների վերլուծությունների արդյունքում:	Վերլուծություն և երաշխավորություններ իմշակում:			
Ուսումնական աստատություններ ն մանկավարժահոգեբ անական աջակցության խմբերի միջև փորձիփոխանակում:	Ուսումնական հաստատությունների մանկավարժահոգեբան ական աջակցության խմբերի համար կազմակերպվում են փոխայցելություններ ուսումնական հաստատություններ:	7.1 Փորձի փոխանակման փոխայցելություններ ՀՈՒՀ-երիմիջև:	7.1.1 Փորձի փոխանակման փոխայցելությունների թիվը	16	30.12.2022թ
			7.1.2 Փոխայցելություններին մասնակցած ՄՀԱ խմբի անդամների թիվը:	150 (առնվ ազն)	
Համընդհանուր ներառական կրթության համակարգի և երեխաների ներառական և որակյալ կրթություն ստանալու իրավունքի շուրջ իրազեկության բարձրացում:	Իրազեկության բարձրացման և դրական վերաբերմունքի ձևավորման միջոցառումներն իրականացվում են ինչպես դպրոցներում, այնպես էլ հանրության լայն շրջանակներում:	8.1 Մարզային քարոզարշավների կազմակերպում (պաստառների մշակում և տարածում դպրոցներում և հանրային վայրերում: Ֆեյսբուքյան էջերում հաջողության պատմությունների տարածում):	8.1.1. Մարզային քարոզարշավների թիվը:	4	30.12.2022թ
		8.2 Կլոր սեղան քննարկումներ մարզպետարանում, համայնքներում:	8.2.1. Կլոր սեղանների թիվը	4	
		8.3 Հանրային միջոցառումների կազմակերպում (ֆիլմերի դիտում, ցուցահանդես, թատերական և երաժշտական ելույթներ, ֆլեշմոբեր և այլն):	8.3.1. Հանրային միջոցառումների թիվը:	8	
		8.4 Բոլոր դպրոցներում	8.4.1. Բաց դռների օր	150	

		Բոլոր ՀՈՒՀ-երում և ՆՈՒՀ-երում «Ներառական դպրոցի տեսլականին ընդառաջ» բաց դռների օրվա կազմակերպում:	հաստատությունների թիվը:	և 70 ՆՈՒՀ)			
Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:	Պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին է ներկայացվում միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն:	Ծրագրի իրականացման մշտադիտակում և տեղեկատվության հավաքագրում: Ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների մշակում և ներկայացում ՀՀԿԳՄՍ նախարարություն և ՀՄԿ:		30.12.2022թ			
Ընդամենը					111,206,880 **դրամ**		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆգործառնական վարչություն
Հ/Հ 900011011732
ՀՎՀՀ 02698732
Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

_____Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Նախագահ

ԿԱՏԱՐՈՂ

«Հույսի կամուրջ» ՀԿ
ք. Երևան, Կորյունի 19 ա, շին 7
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570026212980600
ՀՎՀՀ 01212788

_____Ս. Թադևոսյան
(ստորագրություն)
Կ.Տ